

պատճառաւ, քանի որ անոնք կը սկսէին յաճախել հռովմէական կաթողիկոսներու եկեղեցին, Արզխանապոլիս դացին դանդատելու: Հոն Եփրեմ եպիսկոպոս, իրենց գլուխն անցած, Վէզիր Քէհիւայիմ ներկայացաւ՝ վերջնոյն յայտարարելով, որ պատրիարք Սուպհի եւ իրեն կուսակից քահանաները մեծ գործունէութիւն ցոյց կուտային Սուլթանի հայ հպատակներուն մէջ պառակտում ցանկելով, զանոնք իրենց հաւատքէն մոլորցնելով եւ համոզելով, որ անոնք հռովմէական կաթողիկոսութիւն ընդունին: Քէհիւան կը հարցնէ. «Ի՞նչ է այս կաթողիկը, անհաւատ (քրիստոնեայ) չէ՞»: «Այո՛», — կը պատասխանէ Եփրեմ եպիսկոպոս: «Ուրեմն, — կ'ըսէ Քէհիւան պաղ կերպով, — եթէ խող մը սեւ, սպիտակ կամ կարմիր ըլլայ, դարձեալ խողը խող չէ՞»: Այսինքն թէ՛ անհաւատը, հայ կամ անհաւատ կաթողիկ, դարձեալ անհաւատ մըն է, որուն հաւատքին համար Դուռը հոգ չընէր: Ոստղը (Եփրեմ), առանց Քէհիւայի այս արտայայտութենէն շփոթելու կամ յուսահատելու, մեղմօրէն կը պատասխանէ՝ խնդիրը Դրան շահերուն վերադրելով: Ան կ'ըսէ.

«Ես ձեզ չեմ համոզեր ձեր ականջները նեղելու համար հայ քրիստոնեայի կամ հռովմէական կաթողիկի միջեւ եղող տարբերութիւնը բացատրելով, այլ խոնարհօրէն ձեր միջնորդութեամբ Դրան պաշտպանութիւնը կը հայցեմ գարա փափագներուն դէմ, որոնք մեր մէջ կը յուզեն խղճմտանքի ազատութիւնը, որ Բարձրագոյն Դռնէն Օսմանեան Կայսրութեան մէջ բնակող բոլոր ազգութեանց շնորհուած է: Այսպէս անոնք բազմաթիւ հայ ընտանիքներ կը մոլորցնեն եւ մեր եկեղեցիներէն իրենցինին կը քաշեն, ի մեծ կորուստ Դրան, ինչպէս ե՛ւ մեզի, քանի որ հաւատափոխները իրենց զաւակները քրիստոնեայ աշխարհը կը զրկեն կրթութեան համար, ուր անոնցմէ ոմանք կը մնան, իսկ ոմանք ալ կը վերադառնան ֆրանկի հազուատով եւ իբր ֆրանկ

կ'անցնին, իբր այդ պաշտպանուելով կաթողիկ դեսպաններէ: Որով՝ անոնք զերծ կը մնան Դրան վճարելէ (տուրք), ու մեր եկեղեցիները, ըլլալով աղքատ եւ զրկուած, կը զրկուին անոնց եւ իրենց ընտանեաց (եկեղեցական) հարկերէն, եւ (եկեղեցիները) չեն կրնար այնքան վճարել, որքան նախապէս կրնային: Պատրիարք Սուպհի (կ'աւելցնէ Եփրեմ) պէտք է որ այս խնդրոյն պաշտպանը ըլլար իմ տեղս: Դրան հաւատարիմ Սուլթանին հպատակներէն շատերուն ընկերակցութեամբ եւ խնդրանքին վրայ է, որ (կը դիմեմ): (Սուլթանին այս հպատակները), ինչպէս իրենց պարտականութեան, նոյնպէս նաեւ իրենց կրօնքին հաւատարիմ կը մնան, իսկ ան (Սուպհի) Պապէն թոշակ կը ստանայ եւ համաձայն է անոր քարոզիչներուն ներկայ խառնակութեանց, որոնց համար կը դանդատիմ»:

«Քէհիւան հող կ'ընդմիջէ անոր դանդատը՝ նախորդէն աւելի մեղմութեամբ ըսելով. «Լա՛ւ, լա՛ւ, ես Վէզիրին կը ներկայացնեմ խնդիրը»: Եւ Եփրեմ խորունկ խոնարհութեամբ մը կը մեկնի:

«Ես իմացայ, որ ան յետոյ յիշատակազիր մը ներկայացուցած է, ստորագրուած իր կուսակցութեան գլխաւոր քահանաներէն, Վէզիրին ուղղեալ: Եւ չեմ գիտեր, թէ Քէհիւային որեւէ նուէր տուած է (ինչպէս որ հակառակորդ կուսակցութիւնը հրապարակած է), որպէսզի իր պատճառաբանութիւնը աւելի ազդու ըլլայ: Սակայն, քանի մը օր վերջ Վէզիրը հրամայած է պահակներուն հռովմէական եկեղեցիներու դրան առջեւ կանդնիլ եւ ձերբակալել հոն մտնել փորձող հայ հպատակները: Աղքատները քիչ մը կը ծեծուէին, իսկ հարուստներն ալ տուգանքի կ'ենթարկուէին, երբ անոնք հոն յաճախել շարունակէին: Այսպէս Կ. Պոլսոյ մէջ ժամանակի մը համար հաւատափոխութիւնը դադարեցուցին: Ասկէ զատ, պատրիարք Սուպհի իրեն համախոհ վարդապետներով եւ հետեւորդներով ձեր-